Ցեղասպանագիտական հանդես 8 (2), 2020
https://doi.org/10.51442/jgs.0004

Նարինե Ս. Հակոբյան
ՀՑԹԻ հայցորդ

1894-96 ԹԹ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՆԳԼԱԼԵԶՈՒ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ (1970-ԱԿԱՆ - 2010-ԱԿԱՆ ԹԹ.)[1]

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, համիդյան կոտորածներ, պատմագրություն, Հայկական հարց, Օսմանյան կայսրություն:

Հոդվածը նվիրված է արևմտյան անգլալեզու պատմագրության մեջ համիդյան կոտորածների հիմնահարցի քննարկմանը: Ցույց է տրվում, որ գրեթե բոլոր հեղինակներն անդրադարձել են համիդյան կոտորածների և 1915 թ. ցեղասպանության միջև «շարունակականության» խնդրին: Պաշտպանելով կամ քննադատելով «շարունակականության» փաստարկն՝ այդ հեղինակներն այն դարձրել են թերևս ամենաքննարկված հարցը պատմագրության մեջ: Հոդվածում մերժվում է նման հակադրությունը և հիմնավորվում, որ համիդյան կոտորածների պատմագիտական գնահատականը պետք է հաշվի առնի երկու տեսակետներն էլ, այլ ոչ թե անպայման հակադրի դրանք:

Հոդվածում առաջարկվում է պատմագիտական գնահատականի նոր՝ «միացյալ» մո-տեցում, որը պետք է ա) համիդյան կոտորածները 1915-1923 թթ. ցեղասպանության հետ միասին դիտարկի Հայկական հարցի համատեքստում, բ) զուգահեռներ անցկացնի Օսմանյան կայսրության հպատակ այլ ժողովուրդների նկատմամբ 1820-ականներից մինչև 1920-ականներ իրականացված հալածանքների և կոտորածների հետ, գ) քննարկի արևմտահայերի կոտորածները՝ «գերազանցելով» Օսմանյան կայսրության ձևաչափը՝ համակողմանիորեն ուսումնասիրելով օսմանյան բռնությունների ձևավորման և իրականացման վրա ազդող արտաքին գործոնները և դրանց հետևանքները:

****

Արևմտահայերի՝ 1890-ականների կոտորածների թեման Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության կարևորագույն հիմնախնդիրներից է: Համիդյան կոտորածները, Հայկական հարցի՝ միջազգային դիվանագիտության խնդիր դառնալուց (1878 թ.) մինչև 1915-1923 թթ. ցեղասպանությունը ընկած ժամանակահատվածը, հակահայկական քաղաքականության ամենազանգվածային դրսևորումը լինելով՝ մի կողմից ցույց են տալիս տեղային կամ զանգվածային կոտորածների տեսքով Հայկական հարցը լուծելու մոտեցման շարունակականությունը, մյուս կողմից մատնացույց են անում նպատակի, ձևի, որակի, քանակի և այլ հատկանիշներով զգալի տարբերություններ, երբ համեմատվում են Առաջին աշխարհամարտի ընթացքում տեղի ունեցածի հետ: Այս ոչ միանշանակ ընկալումն էլ դարձել է այն

1 Հոդվածը ստացվել է 17.09.2020 և ընդունվել տպագրության՝ 11.10.2020:

հիմնական պատճառներից մեկը, որ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմագրությունը բավական տարբեր, երբեմն նաև հակասական գնահատականներ է տվել համիդյան կոտորածների խնդրին:

Հայոց ցեղասպանությանը նվիրված աշխատությունների ճնշող մեծամասնության մեջ թեկուզ հպանցիկ, բայց անդրադարձ կա 1890-ականների կոտորածներին: Դրանցից շատերն անգամ գիտական վերլուծության են ենթարկել համիդյան կոտորածների և Հայոց ցեղասպանության «փոխհարաբերությունները»: Ավելին՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված մի շարք գրքերում և պատմագրական առանձին հոդվածներում տարբեր հեղինակներ, անդրադառնալով Մեծ եղեռնի պատմագրությանը, բավական ուշագրավ դիտարկումներ են կատարել նաև համիդյան կոտորածների հարցի շուրջ՝ խնդիր ունենալով բացատրելու հենց Առաջին աշխարհամարտում տեղի ունեցածը[2]: Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է ընդգծել, որ եթե խորհրդահայ և հետխորհրդային հայաստանյան պատմագրությունը համիդյան կոտորածները հիմնականում դիտարկում է Օսմանյան կայսրության հակահայկական քաղաքականության շարունակականության ծիրի մեջ, ապա անգլալեզու գրականության մեջ հիմնախնդրի շուրջ կան և՛ նմանատիպ, և՛ խիստ տարբեր մոտեցումներ[3]:

Սույն հոդվածի նպատակը Հայոց ցեղասպանության թեմայի պատմագիտության քննությունն է, որի առանցքը, սակայն, ոչ թե 1915 թ. է, այլ համիդյան կոտորածները: Այսինքն՝ ի տարբերություն առկա պատմագիտական ակնարկների՝ սույն հոդվածը քննության է առնում համիդյան կոտորածների պատմագիտական մեկնությունները, իսկ հղումները 1915 թ. կատարվում են խնդիրը համատեքստի մեջ հասկանալու նպատակով: Խնդրո առարկա հիմնահարցի քննությունը կատարվում է պատմագրական ակնարկներին բնորոշ թեմատիկ բաժանման սկզբունքով՝ հիմքում ունենալով Հայոց ցեղասպանության խնդրի տարբեր մեկնաբանությունները: Վերջում՝ եզրակացության մեջ, ամփոփվում է հարցի ուսումնասիրվածության աստիճանը և առաջարկվում է նոր՝ ավելի լրացված և համակողմանի մոտեցում խնդրին: Հոդվածը ցույց է տալիս, որ համիդյան կոտորածների պատմագիտական գնահատման հիմքում

---

2 Տե՛ս, օրինակ, Ronald Grigor Suny, "The Holocaust before the Holocaust: Reflections on the Armenian Genocide," in *Der Volkermord an den Armeniern und die Shoah*, ed. Hans-Lukas Kieser and Dominik J. Schaller (Zurich: Chronos Verlag, 2002), 83-100; Ronald Grigor Suny, *They Can Live in the Desert but Nowhere Else: A History of the Armenian Genocide* (Princeton, NJ: Princeton University Press, 2015), 367-375; Hans-Lukas Kieser, "Armenians, Turks, and Europe in the Shadow of World War I: Recent Historiographical Developments," in *Der Völkermord an den Armeniern, die Türkei und Europa*, ed. Hans-Lukas Kieser and Elmar Plozza (Zürich: Chronos Verlag, 2006), 43-59; Taner Akçam, *The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire* (Princeton: Princeton University Press, 2012), 126-129; Bedross Der Matossian, "Explaining the Unexplainable: Recent Trends in the Armenian Genocide Historiography," *Journal of Levantine Studies* 5-2, (2015), 143-166:

3 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում*: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու,* կազմող, խմբագիր և առաջաբանի հեղինակ՝ Մկրտիչ Ներսիսյան (Երևան, Հայաստան, 1991); Երվանդ Սարգսյան, *Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում* (Երևան, Հայաստան, 1964); Ջոն Կիրակոսյան, *Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19* – րդ դարի *90* – ական թթ.-*1914* թ.*)* (Երևան, Հայաստան, 1982):

դրվող «շարունակականություն - ոչ շարունակականություն» հակադրությունը սպառել է իրեն, քանի որ երկու տիպի մեկնաբանություններում էլ մնում են «բաց տեղեր»: Այս պնդումը հիմնվում է այն իրողության վրա, որ համիդյան կոտորածների վերաբերյալ շարունակականության թեզը հաճախ անտեսում կամ ոչ պատշաճ է գնահատում դրա նպատակային առանձնահատկությունները, իսկ 1915 թ. ցեղասպանությունն առանձին երևույթ ներկայացնողները հաճախ թերագնահատում կամ պարզապես անտեսում են Հայկական հարցի իրողությունը:

Մինչդեռ անհրաժեշտ է առաջ անցնել այս հակադրությունից և կիրառել նոր՝ «միացյալ» մոտեցում համիդյան կոտորածները հասկանալու համար, որը ընդունում է և՛ կոտորածների շարունակականությունը, և՛ դրանց նպատակային փոխակերպումն Առաջին աշխարհամարտի տարիներին: Միաժամանակ, պետք է չթերագնահատել Հայկական հարցի իրողությունը, որը ոչ միայն շարունակականության, այլ նաև փոփոխությունների գլխավոր ցուցիչն է: Ավելին՝ հենց Հայկական հարցն է, որ հնարավորություն է տալիս համիդյան կոտորածների պատճառները փնտրելու ոչ միայն Օսմանյան կայսրության ներսում, այլ նաև դիտարկելու այն բոլոր մարտահրավերները, որոնց կայսրությունը դեմ հանդիման էր դուրս եկել տվյալ ժամանակահատվածում: Վերջապես, զանգվածային բռնության շարունակականության և աստիճանական փոխակերպման ու արմատականացման ուսումնասիրությունը պետք է ներառի կայսրության գոյության վերջին հարյուրամյակում բազմաթիվ այլ ժողովուրդների՝ հույների, ասորիների, բուլղարների, եզդիների և այլոց նկատմամբ իրականացված հալածանքներն՝ իհարկե ընդգծելով հայկականի՝ ամենաարմատական ու ամենա-զանգվածային բնույթը:

1. Վահագն Դադրյան. շարունակականության թեզը, կրոնական և անպատժելիության գործոնները

Ամերիկահայ անվանի սոցիոլոգ և պատմաբան Վահագն Դադրյանը, թեև առաջին գիտնականը չէ, որ գրել է Մեծ եղեռնի մասին, սակայն առաջիններից մեկն էր, ով դա արեց բարձր պրոֆեսիոնալիզմով, արևմտյան գիտական լսարանին հասկանալի լեզ-վով, իսկ արդյունքներն սկսեց տպագրել հեղինակավոր գիտական հանդեսներում: Այսինքն՝ մեծապես նրա գիտական ժառանգության շնորհիվ է, որ Հայոց ցեղասպա-նության ուսումնասիրությունը մտավ արևմտյան գիտական շրջանակներ: Դադրյանի՝ Զորյանի ինստիտուտի կայքում տեղադրված մատենագիտությունը ցույց է տալիս, որ նա սկսել է Մեծ եղեռնի վերաբերյալ անգլերեն հոդվածներ տպագրել դեռևս 1970-ականների սկզբին[4]: Այդ ժամանակահատվածը նաև Արևմուտքում Հոլոքոստի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման փուլն էր, և Դադրյանի շատ աշխատութ-յուններ նվիրված էին հայկականը հրեականի հետ համեմատելուն, որպեսզի ցույց տրվի,

4 Vahakn N. Dadrian, *Bibliography of Published Works*, https://zoryaninstitute.org/wpcontent/uploads/2017/02/Vahakn-N.-Dadrian-Bibliography-of-Published-Works-2016_08_25-18_41_10-UTC.pdf, դիտվել է 10.08.2020:

ապացուցվի՝ հայկականի՝ ցեղասպանություն լինելու փաստը: Չնայած Հոլոքոստի մի շարք մասնագետների առ այսօր շարունակվող բացասական դիրքորոշմանը Հոլոքոստը այլ ցեղասպանությունների հետ համեմատելու փորձերի նկատմամբ՝ մեծապես Դադրյանի շնորհիվ էր նաև, որ համեմատական ցեղասպանագիտությունը դարձավ բավականին լայն ընդունված մեթոդ այս ոլորտում: Ավելին՝ ավելի քան երեսուն տարի նվիրելով Մեծ եղեռնի ուսումնասիրությանը՝ Դադրյանն անդրադարձել է Հայոց ցեղասպանության բազմաթիվ ասպեկտներին՝ ստեղծելով այն հիմքը, որի վրա այսօր հենվում է Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը:

Հայոց ցեղասպանությունը բացատրելիս Դադրյանը զարգացնում է «շարունակականության» թեզը, որի համաձայն՝ Առաջին աշխարհամարտի ընթացքում Հայերի ցեղասպանությունը թուրքական իշխանությունների կողմից բավական երկար ժամանակ պատմական խոցելիության ձևավորման հետևանք է: Խոսելով համիդյան կոտորածների մասին՝ Դադրյանի համար դիտառանցք է դրանց կարևորությունը՝ հետագայում տեղի ունեցած իրադարձությունների համար: Այլ կերպ ասած՝ Դադրյանը հարցնում է, թե արդյո՞ք այդ կոտորածներն ընդամենը էպիզոդիկ դեպքեր են, թե՞ հայերի ճակատագրի վերաբերյալ Օսմանյան իշխանությունների հետագա քայլերի համար ունեցել են լրացուցիչ ազդեցություն[5]: Ըստ Դադրյանի՝ դրա համար նախ կարևոր է հասկանալ, թե որքանով և ինչպես է Հայոց ցեղասպանության իրականացումը գերազանցում համիդյան կոտորածներին: Նա պնդում է, որ առկա է շարունակականություն այն իմաստով, որ *հանցագործ-զոհ կերպարը* ոչ միայն պահպանվում է, այլև տեղափոխվում է հաջորդ մակարդակ, որը ենթադրում էր արդեն զոհի բնաջնջում[6]: Դադրյանը նկատում է երկու հիմնարար տարբերություն Հայոց ցեղասպանության և համիդյան կոտորածների միջև՝ (1) 1894-1896 թթ. կոտորածներին զուգահեռ արտաքին պատերազմ չէր ընթանում, (2) իրականացնող ռեժիմների փոփոխություն[7]: Սակայն այս երկու տարբերություններն ավելի շուտ մատնացույց են անում ոչ թե դրանց տարբեր երևույթներ լինելը, այլ հենց շարունակականությունը:

Դադրյանի այդ փաստարկը հիմնվում է նրա այն դիտարկման վրա, որ առկա են եղել գործոններ, որոնք շատ ավելի ուժեղ և ազդեցիկ են եղել, քան վերոնշյալ տարբերությունները: Այդ գործոններն են կրոնականը և շարունակական անպատժելիությունը: Խոսելով կրոնական գործոնի՝ իսլամի մասին, Դադրյանն այն և, հատկապես, Օսմանյան կայսրությունում դրա մեկնաբանությունը դնում է էթնիկ պատկանելիության հիմքում, որը կարևոր դերակատարություն է ունեցել ինչպես համիդյան կոտորածների, այնպես էլ Հայոց ցեղասպանության դեպքում[8]: Այսինքն՝ կար հայ-թուրքական էթնիկ խնդիր, որը թուրքական երկու ռեժիմների ղեկավարների կողմից դիտվում էր ոչ միայն որպես բացառապես Թուրքիայի ներքին գործ, այլ նաև

5 Vahakn N. Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence, Oxford: Berghahn Books, 1995), 172.

6 Նույն տեղում, 172:

7 Նույն տեղում, 172, 173:

8 Նույն տեղում, 3:

որպես արմատական վեճ, որը մարտահրավեր էր նետել իսլամի գերակայության գաղափարին: Ինչպես նրանց, այնպես էլ նրանց բազմաթիվ հետևորդների համար իսլամը հավատք էր, որը միևնույն ժամանակ տալիս էր քաղաքական մանդատներ, ներառյալ այն, որ ինչ օրենքներ և հրամաններ ընդունվեին, ոչ մուսուլման ենթակաների համար նախատեսված էր ավելի ցածր կարգավիճակ[9]: Օսմանյան պետական համակարգի կայսերական և թեոկրատական բաղադրիչները միավորվելով ստեղծել են նախադրյալներ ընդհանուր մոտեցումներ ձևավորելու համար, որոնք որոշ հանգամանքներում միտում ունեին թույլատրելու, ինչպես նաև օրինականացնելու ըմբոստ փոքրամասնության նկատմամբ դաժանությունները: Ստեղծվել էր այնպիսի աշխարհայացք, որին հատուկ էին մշակույթի տարրեր, որոնք ենթադրաբար թույլատրում էին զանգվածային կոտորածների հնարավոր կիրառությունը որպես պետական քաղաքականության գործիք[10]: Թուրքերը պնդում են, որ հայերը փորձել են եվրոպական տերությունների օգնությամբ ընդլայնել իրենց իրավունքները[11]: Այդ պատճառով էլ նրանք գտել են, որ իրենց կրոնական պարտքն ու արդարությունը պահանջում են կոտորել հայերին և զավթել նրանց ունեցվածքը: Նույնիսկ, հնարավորության դեպքում, նրանք կոտորածն իրականացնելիս կատարում էին մուսուլմանական ծես՝ ցանկանալով էլ ավելի ընդգծել մուսուլմանական օրենքների էությունը[12]: Նույնակերպ է Դադրյանը բացատրում կոտորածների իրականացման ընթացքի և կրոնական գործոնի կապը[13]:

---

9 Նույն տեղում, 173:

10 Նույն տեղում:

11 Նույն տեղում, 147:

12 Նույն տեղում:

13 Հայերի վրա հարձակման հիմք ստեղծելու նպատակով հայտարարում էին, թե այս կամ այն քաղաքի հայերը պատրաստվում են հարձակվել մզկիթի վրա, ուստի անհրաժեշտ է որպեսզի տեղական իշխանություններն անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն: Ամենուրեք կոտորածները սկսվում և ավարտվում էին ազդանշանով և նույն սցենարով: Կոտորածներն իրականացնելու համար սկզբում քաղաք էր մտնում կանոնավոր զորքը, որին հետևում էին թալանելու համար նախատեսված քրդական անկանոն զորքը և խուժանը: Հեղինակն ուշադրությունը կենտրոնացնում է այդքան մարդկանց օպերատիվ կերպով մոբիլիզացնելու հանգամանքի վրա՝ նշելով, որ այն չի կարող բացատրվել միայն սուլթանի իշխանությամբ, քանի որ հեռավորության վրա իշխանությունները կարող են հրամայել, բայց այդ ամենը բավարար չէ: Այդ հրամանների իրականացման գործընթացը ղեկավարելու համար անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել, որոնք կարող են համոզել մարդկանց: Բացի այդ՝ հրամանները երբեք բաց տեքստով չէին տրվում, և դրանք նախ և առաջ պետք էր մեկնաբանել, ինչպես նաև այս ամենն իրականացնելու համար ընտրվում էին հավատարիմ մարդիկ կրոնական ղեկավարներից. մուֆթիները, որոնք մուսուլման իրավաբաններ և բարձր կրոնական ղեկավարությունն էին, քադիները՝ մուսուլման դատավորները, որոնք կարգ ու կանոնի պահպանման ներկայացուցիչներն էին, ուլեմաները՝ կրթական ոլորտի ներկայացուցիչները, որոնք պայքարում էին աշխարհիկության և «անհավատների» օսմանյան թեոկրատական համակարգ մուտք գործելու դեմ, մոլլաներն ու սոֆթաները, որոնք հայերի կոտորածներն իրականացնելիս առաջին շարքերում էին: Բոլոր այս կրոնական ներկայացուցիչները կենտրոնական դեր են խաղացել հայերի կոտորածների օրինականացման և հրահրման մեջ: Այդ մասին են վկայում օտարերկրյա դիվանագետները, պատմաբանները: Ժողովրդին համախմբելու գործում մեծ դեր են խաղացել մզկիթները, իսկ ամենասարսափելի կոտորածներն իրականացվել են ուրբաթ օրվա աղոթքից հետո: Տե՛ս Dadrian, *The History of the Armenian Genocide*, 148-150:

Շարունակականությունը մատնացույց անող երկրորդ գործոնն, ըստ Դադրյանի, շարունակական անպատժելիությունն էր: Չնայած հումանիտար ինտերվենցիաների վտանգին՝ հանցագործներն, այնուամենայնիվ, անպատիժ էին մնում, որն էլ իր հերթին խթան էր դառնում ավելի մեծ անօրինություն և դաժանություն իրականացնելու այնպիսի ճգնաժամային իրավիճակներում, որոնք հաջորդել են կոտորածներին[14]: Հենց այստեղ էլ կարելի է գտնել կապող օղակը չափավոր համիդյան կոտորածների և 1915-1918թթ. իրականացված «մեծածավալ ցեղասպանության» միջև[15]: Այս անպատժելիությունն էր, որ հնարավոր դարձրեց ազգային փոքրամասնությունների ոչնչացման քաղաքականության շարունակականությունն ու զարգացումը: Փաստորեն, զսպող մեխանիզմների բացակայության և դրանից ծնվող անպատժելիության գիտակցումը, Դադրյանի պնդմամբ, «փորձ էին հասկանալու՝ որտեղ է ավարտվում որպես թիրախ ընտրված բնակչության ոչնչացնելու մեթոդների և չափերի սահմանը, եթե այդպիսին կա»[16]: Այսինքն՝ Դադրյանի համար համիդյան կոտորածները ինչ-որ իմաստով փորձեր էին կամ նախաբան, որը *կանխատեսում էր* հայերի ցեղասպանությունը Առաջին աշխարհամարտի տարիներին:

2. Ռիչարդ Հովհաննիսյան. շարունակականություն և ազգայնականություն

Ամերիկահայ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը խմբագրել է Հայոց ցեղասպանության ուսումնասիրությանը նվիրված մի շարք ժողովածուներ[17]: Առաջին ժողովածուն՝ *The Armenian Genocide in Perspective* [Հայոց ցեղասպանությունը համեմատության մեջ] մեծամասամբ ներառում է դեռևս 1982 թ. Թել Ավիվում Իսրայել Չառնիի ջանքերով կայացած գիտաժողովում ներկայացված զեկույցների արդյունքները: Չնայած թուրքական, այնուհետև նաև Իսրայելի իշխանությունների կողմից ահաբեկումներին և ճնշումներին, որոնք ցանկանում էին բացառել Հայոց ցեղասպանությանը նվիրված քննարկումները կամ չեղարկել գիտաժողովը՝ այնուամենայնիվ, բարձր ինքնագիտակցություն ունեցող մարդկանց շնորհիվ, ովքեր մերժեցին քաղաքական նկատառումները վեր դասել բարոյական և հումանիտար հրամայականներից, գիտաժողովն իրականություն է դառնում[18]: Ինչպես նշում է Ռիչարդ Հովհաննիսյանը, Հայոց ցեղասպանության թեմայի ակադեմիական ուսում-

14 Նույն տեղում, 173:

15 Նույն տեղում, xxiii:

16 Նույն տեղում, 174:

17 *The Armenian Genocide in Perspective*, ed. Richard G. Hovannisian (New Brunswick, New Jersey: Transaction Books, Rutgers University, 1986); *The Armenian Genocide: History, Politics, Ethics,* ed. Richard G. Hovannisian (Houndmills, Basingstoke, Hampshire: Palgrave Macmillan, 1992); *Remembrance and Denial: The Case of the Armenian Genocide*, ed. Richard G. Hovannisian (Detroit: Wayne State University Press, 1998); *Looking Backward, Moving Forward: Confronting the Armenian Genocide*, ed. Richard G. Hovannisian (New Brunswick, London: Transaction, 2003); *The Armenian Genocide: Cultural and Ethical Legacies*, ed. Richard G. Hovannisian (New Brunswick, New Jersey: Transaction Books, 2007).

18 *The Armenian Genocide in Perspective*, 2.

նասիրության մեկնարկը տրվեց 1980-ականներին՝ չնայած դեռևս 1915 թ. հարյուրավոր զեկույցներ և գրքեր են գրվել ցեղասպանության ականատեսների, դիվանագետների, թղթակիցների, միսիոներների կողմից: Նա նշում է, որ այս փաստը կարելի է բացատրել նրանով, որ տարիներ շարունակ վերապրողներն ու նրանց ժառանգներն իրենց ջանքերը կենտրոնացրել էին նոր միջավայրին հարմարվելու, իրենց հարազատներին, բարեկամներին գտնելու, դպրոցներ և եկեղեցիներ կառուցելու ուղղությամբ[19]: Սակայն, այդուհանդերձ, ակադեմիական ուսումնասիրության բացակայության գլխավոր փաստարկն, ըստ Հովհաննիսյանի, այն էր, որ անհրաժեշտություն չէին տեսնում կենտրոնանալ մի բանի վրա, որ ամբողջ աշխարհը ընդունել է որպես կատարված իրողություն: Նրանք նույնիսկ չէին պատկերացնում, որ հետագայում կլինեն մարդիկ, ովքեր կա՛մ կփորձեն ժխտել, կա՛մ էլ նվազեցնել Հայոց ցեղասպանության նշանակությունն՝ այն ուղղակի անվանելով ընդհանուր սարսափ կամ պատերազմի հետևանք[20]:

The Armenian Genocide: Wartime Radicalization or Premeditated Continuum հոդվածում [Հայոց ցեղասպանություն. պատերազմական ժամանակաշրջանի արմատականացում թե կանխամտածված շարունակականություն] Ռիչարդ Հովհաննիսյանը դիտարկում է Հայոց ցեղասպանության խնդրի տարբեր մեկնաբանությունները՝ մասնավորապես փորձելով բացահայտել, թե արդյո՞ք այն շարունակական գործընթաց է 1890-ականներից մինչև 1920-ականներ, թե՞ երիտթուրքերի կողմից Առաջին աշխարհամարտի ընթացքում կիրառված արմատական միջոց[21]: Ռիչարդ Հովհաննիսյանը ներկայացնում է շարունակականության մտադրության վերաբերյալ կողմ և դեմ փաստարկներ և նշում, որ դրանք չեն կարող մեկը մյուսին բացառել[22]: Նա նշում է, որ 1915 թ. ցեղասպանությունը քանակապես և որակապես տարբերվում է 1890-ական թթ. կոտորածներից: Համիդյան ռեժիմն օգտագործեց կոտորածն ու թալանը ստատուս քվոն պահպանելու համար, այսինքն՝ պետության խորտակվող նավը պահելու համար: Սուլթան Համիդի հավատարիմ ուժերը ցանկանում էին պատժել հայերին եվրոպական միջամտություն փնտրելու համար, նրանց թուլացնել տնտեսապես և փոխել ժողովրդագրական հավասարակշռությունն, ինչպես նաև առաջ մղել իսլամացման գործընթացը: Այնուամենայնիվ, Հովհաննիսյանը գտնում է, որ քիչ է հավանականությունը, որ սուլթանը կարող էր մտածել, որ նա կկարողանա ոչնչացնել բոլոր հայերին[23]: Իսկ ինչ վերաբերում է երիտթուրքերի ծայրահեղ թևին, նրանք ցանկանում էին ոչ թե պահպանել ստատուս քվոն, այլ կտրուկ փոխել այն, ստեղծել նոր հասարակություն՝ միասնական էթնո-կրոնական, լեզվական և մշակութային ինքնության հիման վրա: Պաշտպանելով թուրքիզմի գաղափարախոսությունը՝

19 Նույն տեղում, 1:

20 Նույն տեղում:

21 Richard G. Hovannisian, "The Armenian Genocide: Wartime Radicalization or Premeditated Continuum," in *The Armenian Genocide: Cultural and Ethical Legacies*, 3-17.

22 *The Armenian Genocide,* 6.

23 Նույն տեղում:

Թալեաթ-Էնվեր-Շաքիր-Նազիմ խումբը մերժում էր հին համակարգի վրա հիմնված բազմակարծիք հասարակությունը և կրոնի վրա հիմնված «միլլեթ» համակարգերը: Փոխարենը, նրանք միջոցներ էին փնտրում արագացնելու նոր կարգերի հաստատումը, որում հայերը հույների, ասորիների և այլ ոչ թուրք ազգերի հետ կամ ամբողջովին կձուլվեին, կամ այս կամ այն կերպ կոչնչացվեին: Հետևաբար, Հովհաննիսյանի համար էական տարբերության կա 1890-ականների և այն ամենի միջև, ինչ տեղի էր ունենում Առաջին համաշխարհային պատերազմի քողի ներքո[24]:

Այնուամենայնիվ, Ռիչարդ Հովհաննիսյանը գտնում է, որ չնայած այս էական տարբերություններին՝ 1890-ականներից (գուցե նույնիսկ 1870-ականներից) սկսած մինչև 1920-ականներ ընկած ամբողջ ժամանակահատվածն էթնիկ զտումների, հարկադիր կրոնափոխության և հայատյացության շարունակականությունն է: Այս ամբողջ ընթացքում հայերը վտարվում էին իրենց հողերից, մահվան և ոչնչացման սպառնալիքի ներքո գյուղերում հարկադրված կրոնափոխ էին լինում, և բազմաթիվ մարդիկ փախչում կամ գաղթում էին այլ երկրներ[25]: Նա եզրակացնում է, որ, այդուամենայնիվ, կարելի է հստակ և ընդգծված տարբերակում դնել XIX դարի կոտորածների և XX դարի ցեղասպանության միջև՝ հաշվի առնելով նաև սանձարձակ բռնության աստիճանաբար աճող շարունակականությունը, որը գագաթնակետին հասավ 1915-1916 թվականներին[26]:

3. Բենի Մորիս և Դրոր Զէեվի. շարունակականության թեզի նոր և համակողմանի մեկնաբանություն

Շարունակականության թեզը նոր մեկնաբանություն է ստացել իսրայելցի պատմաբաններ Բենի Մորիսի և Դրոր Զէեվիի հեղինակած *The Thirty-Year* Genocide*: Turkey's Destruction of Its Christian Minorities, 1894–1924* [Երեսուն տարվա ցեղասպանություն. Թուրքիայի կողմից իր քրիստոնյա փոքրամասնությունների ոչնչացումը, 1894-1924 թթ.] աշխատության մեջ: Այս հեղինակների մոտեցումը խարսխված է երկու սկզբունքի վրա՝ (ա) ինչպես համիդյան, այնպես էլ Առաջին աշխարհամարտի ժամանակ տեղի ունեցածը դիտարկել որպես «բռնության երկարատև պատմության» մասեր, (բ) հակահայկական քաղաքականությունը պետք է դիտարկել բոլոր քրիստոնյա փոքրամասնությունների հետ տեղի ունեցածի համատեքստում: Նրանց հիմնական թեզն այն է, որ թե՛ համիդյան կոտորածները, թե՛ 1915-ի դեպքերը և 1919-1924 թթ. թուրք ազգայնականների իրականացրածը երեք առանձին քաղաքականություններ չեն:

Ըստ նրանց՝ երեք ժամանակահատվածների առանձին դիտարկումը խաթարում է իրականությունը, թե ինչ էին թուրքերը մտադրվել, և ինչ էր տեղի ունեցել: Իսկ իրողությունը հասկանալու համար հեղինակները կոչ են անում ուշադրություն դարձնել այնպիսի կարևոր գործոնների վրա, ինչպիսիք էին՝ *(1) կրոնի գործոնը,*

24 Նույն տեղում, 7:

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում:

(2) թուրքական ազգայնականությունը, (3) արտաքին միջամտություններից վախերը, (4) էթնիկ մրցակցությունները և տնտեսական նախանձը, (5) ինչպես նաև քաղաքական և սոցիալական գերիշխանության պահպանման ցանկությունը: Վերոնշյալ փաստերն են, որ առկա են բոլոր երեք ժամանակահատվածներում[27]:

Ինչպես Դադրյանը, այս հեղինակները ևս մեծ նշանակություն են տալիս կրոնական գործոնին: Նրանց կարծիքով *կրոնը*՝ իսլամը, հանդես է եկել վերոհիշյալ ուժերի հետ միավորված: Որպես ոգի և գաղափարախոսություն, իսլամը կարևոր դեր է խաղացել ամբողջ գործընթացում՝ նրա յուրաքանչյուր փուլում: Օսմանյան իշխանությունները ջիհադ են հայտարարել մահմեդական զանգվածներին մոբիլիզացնելու, քրիստոնյաներին թալանելու և կոտորելու համար: Պատասխանատուներն ավելի հաճախ էին մեջբերում ջիհադը և իսլամական օրենքը՝ իրենց գործողությունները բացատրելու և արդարացնելու համար, անգամ պնդելու, որ այդ գործողությունները պարտադիր էին: Ավելին՝ մահմեդական կրոնական առաջնորդները կոտորածների իրականացման ակնավոր դեմքերն էին[28]: Ինչ վերաբերում է *թուրքական ազգայնականությանը,* հեղինակների նշմամբ, Առաջին համաշխարհային պատերազմի բռնկմանն անմիջապես նախորդող տարիներին քաղաքական-կրոնական շարժառիթը «կայսերականից» դարձավ «ազգայնական», երբ երիտթուրքերն ընդունեցին ազգայնականությունը որպես միավորող սկզբունք՝ աստիճանաբար փոխարինելով օսմանյան իմպերիալիզմին: Իսկ հետագա հակահայկական և հակահունական արշավները, որոնք հանգեցրին արտաքսման և զանգվածային սպանությունների, հեղինակների պնդմամբ, հիմնականում այս ազգայնականության և դրա «թրքացնող» մտածելակերպի հետևանքն էին: Նրանք նաև նշում են, որ ինչպես Մերձավոր Արևելքի բոլոր մուսուլման երկրներում, այստեղ ևս ազգայնականությունն ուներ կրոնական երանգ[29]:

Մորիսն ու Զէեվին մեծ ուշադրություն են դարձնում նաև *էթնիկ մրցակցության և տնտեսական նախանձի* գործոններին: Նրանց պնդմամբ բոլոր տեսակի դահիճների՝ տեղական պաշտոնյաներ, զինվորներ, ժանդարմներ, քուրդ մարդասպաններ, գործողություններում տնտեսական շարժառիթը չափազանց մեծ է եղել: Նրանք ցանկացել են տիրանալ հայերի հողերին, տներին, դրամին և ընտանի կենդանիներին: 1894–1896 և 1919–1923 թթ. քրիստոնյաների վրա գրեթե բոլոր հարձակումներն ուղեկցվել են մեծածավալ թալանով, իսկ որոշ դեպքերում թալանի կոչերը նախորդել են հարձակումներին: 1914–1916 թթ. հայերի և հույների տեղահանությունները ևս ուղեկցվել են մուսուլման հարևանների կողմից թալանով[30]:

Նմանապես, թուրքերի կողմից անձնական և ազգային մակարդակներում քրիստոնյաների նկատմամբ վրեժխնդրությունը պայմանավորված էր 1820-ական թթ.

---

27 Benny Morris & Dror Ze'evi, *The Thirty-Year Genocide: Turkey's Destruction of Its Christian Minorities, 1894–1924* (Cambridge, Massachusetts, and London, England: Harvard University Press, 2019), 5.

28 Նույն տեղում, 494:

29 Նույն տեղում, 5, 493-494:

30 Նույն տեղում, 497:

Բալկաններից մինչև Կովկաս քրիստոնյաների ընդվզումներով և դրա հետևանքով տարածքային կորուստներով: Պատիժը, վրեժխնդրությունը կարևոր դրդիչ հանգամանքներ էին այս հակահայկական գործողությունների համար, հատկապես 1894–1896 թթ: Ըստ հեղինակների՝ կոտորածները կթուլացնեին ռեֆորմների հարցում հայերի խանդավառությունը և իրենց իրավունքների համար պայքարը: Ավելին՝ թուրքերը, սկսելով հայերի կոտորածներն, այլևս հետքայլ չէին կարող անել, քանի որ դա իր հերթին հանգեցնելու էր հայերի վրեժխնդրությանը[31]:

Մյուս կարևոր գործոնը, ինչպես նշում են հեղինակները, *մուսուլմանների սոցիալական և քաղաքական գերակայության* գաղափարախոսությունն էր: Բոլոր երեք վարչակարգերը և մուսուլման բնակչությունը քրիստոնյանների ենթակայությունը համարում էին բնական երևույթ: Իսկ մուսուլմանների հետ քրիստոնյաների հավասարության սկզբունքները, որոնք առաջ էին բերվել քրիստոնյա մեծ տերությունների կողմից և ընդունվել որպես օրենք 19-րդ դարի կայսերական բարեփոխումներով, վիրավորանք էին Ալլահի կամքին և բնական օրենքին: Նրանք, ովքեր կազմակերպում էին զանգվածային սպանությունն ու արտաքսումն՝ Աբդուլ Համիդից մինչև երիտթուրքեր և Քեմալ, առաջնորդվում էին կայսրության, ապա՝ թուրքական *պետության տարածքային ամբողջականությունը պահպանելու ցանկությամբ*: Կայսերական, կրոնական և ազգային նկատառումները նրանց դրդում էին հետ մղել արտաքին վերահսկողությունը, միջամտությունը և ազդեցությունը[32]:

Այսպիսով՝ Մորիսը և Զէեվին համոզված են, որ պատմությունը պետք է դիտարկվի ամբողջական՝ սկսած 1894 թ. և ավարտված 1924 թ., որպեսզի պատշաճ կերպով հասկանալ 1915-1916 թթ. իրադարձությունները, քանի որ թուրքերը համակարգված և զանգվածային կերպով կոտորում էին հայերին 1915-1916 թթ. առաջ, ընթացքում և հետո: 1894-1895 թթ. կոտորածները ճանապարհ հարթեցին 1915-1916 թթ. համար, իսկ 1915-1916 թթ. ճանապարհ էին 1919-1924 թթ. համար: Տարբեր մակարդակներում 1894-1896 թթ. կոտորածները փորձաշրջան էին: 1890-ականները համոզեցին մուսուլմանների և քրիստոնյաների հաջորդ սերնդին, որ ցեղասպանությունը հնարավոր է, քանի որ բնակչությունը և զորքերն իրենց գործը կատարելու են, մեծ տերությունները չեն միջամտելու, հայերը չեն դիմադրելու:

Այսպիսով՝ 1894-1895 թթ. կոտորածները ճանապարհ հարթեցին 1915 թ. համար: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին սպանությունն ու քրիստոնյաների ունեցվածքի զանգվածային բռնագրավումն անհատների և պետության կողմից պարզապես ընդլայնված կրկնությունն էին այն ամենի, ինչ տեղի էր ունեցել 1890-ականներին: Նմանապես 1915-1916 թթ. հայկական կոտորածները ճանապարհ հարթեցին 1919-1924 թթ. հակահունական (և հակահայկական) վայրագությունների համար, որոնցում կրկնվում էին ավելի վաղ ձեռնարկված միջոցառումներից շատերը՝ տեղի ղեկավարների զանգվածային ձերբակալություններ, չափահաս տղամարդկանց նախնական սպանություն, մահվան տանող տեղահանություններ և

31 Նույն տեղում, 498:

32 Նույն տեղում, 492-493:

այլն: Իսկ թե ինչն էր մղում հաջորդական թուրքական կառավարություններին և թուրք ժողովրդին 1894-1896, 1914-1918, 1919-1924 թթ. «ապաքրիստոնեացնելու» Օսմանյան կայսրությունն ու Թուրքիայի Հանրապետությունը, հեղինակները վստահաբար նշում են, որ Աբդուլ Համիդի, երիտթուրքերի և Մուստաֆա Քեմալի օրոք եղել է ընդհանուր քաղաքական խթան և դրդապատճառ: Նախ, ըստ հեղինակների, թուրքերի մեծ մասը՝ ներառյալ երկրի ղեկավարները, անկեղծորեն վախենում էին, որ քրիստոնյա փոքրամասնությունները, հատկապես՝ հայերը, ապակայունացնում են կայսրությունը, իսկ հետագայում՝ նաև Թուրքիան: Նրանք հավատում էին, որ քրիստոնյաների գործողությունները սպառնում էին իրենց երկրի մասնատմանը՝ ներքին դիվերսիոն գործողությունների և արևմտյան ու Ռուսաստանի միջամտությունների համադրման միջոցով:

Հեղինակների երկրորդ կարևոր պնդումն այն է, որ անիմաստ է առանձին դիտարկել յուրաքանչյուր համայնքի՝ հայերի, հույների, ասորիների հետ տեղի ունեցածը: Ավելին՝ նրանք փորձում են ցույց տալ, *որ քրիստոնյա համայնքների ոչնչացումը միայն մեկ նպատակի արդյունք չէր*: Հեղինակները նշում են, որ *ապացույցներ այն մասին, որ բոլոր երեք ժամանակահատվածների թուրք առաջնորդները՝ Աբդուլ Համիդից մինչև Մուստաֆա Քեմալ, քրիստոնյաներին էին խնդիր համարում, այլ ոչ թե միայն հայերին, հույներին կամ ասորիներին, շատ են ինչպես իրենց գործողություններում, այնպես էլ նրանց խոսքերում*: Աբդուլ Համիդ II-ը, ըստ իր անձնական քարտուղարի, հավատում էր, օրինակ, որ իրենց երկրի սահմաններում կարող են «հանդուրժել միայն իրենց ազգակիցներին (թուրքերին) և հավատակիցներին՝ մուսուլմաններին»: Նույն կերպ, ըստ Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպանի, 1915 թ. հունիսին Թալեաթը դեսպանատան աշխատակիցներից մեկին ասել էր, որ թուրքական կառավարությունը մտադիր էր օգտագործել Առաջին աշխարհամարտը երկրի ներքին թշնամիների՝ քրիստոնյաների հարցերը լուծելու համար[33]: Նմանատիպ օրինակները շատ են գրքում:

4. Ռոնալդ Սյունի. «պատահականության» թեզն ընդդեմ «շարունակականության»

Համիդյան կոտորածներին նվիրված *The Hamidian Massacres, 1894-1897: Disinterring a Buried History* [Համիդյան կոտորածներ, 1894-1897 թթ. վերհանելով թաղված պատմությունը] հոդվածում ամերիկահայ պատմաբան Ռոնալդ Սյունին իր քննարկումն սկսում է՝ հիշեցնելով ցեղասպանության եզրույթի ՄԱԿ-ի համապատասխան կոնվենցիայի բանաձևումը՝ գործողություն, որը նպատակ ունի «ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչնչացնելու ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբին»: Ըստ այդմ՝ նա կոչ է անում մասնագետներին ձեռնպահ մնալ զանգվածային ցանկացած բռնություն ցեղասպանություն կոչելու գայթակղությունից: Անշուշտ, զոհերի, ինչպես նաև խնդրին բարոյական գնահատական տվողների համար բռնության

33 Նույն տեղում:

հետևանքները նույնն են, սակայն սոցիոլոգները և պատմաբանները պարտավոր են հստակ սահմանազատում մտցնելու զանգվածային սպանությունների տարբեր ձևերի մեջ: Այսպես, Սյունին 1890-ական թթ. հայերի և ասորիների զանգվածային կոտորածները համարում է «տիպիկ բռնություն» (exemplary violence), որը կիրառվել է հայերին հնազանդեցնելու և հպատակեցնելու համար, և որի թիրախը եղել են որոշակի մարդիկ՝ ի տարբերություն 1915 թ. ցեղասպանության, որի թիրախն արդեն ազգային, կրոնական, կամ ռասայական խումբն էր: Սյունու համար սա այն գլխավոր ցուցիչն է, որը տարբերում է համիդյան կոտորածները 1915 թ. ցեղասպանությունից[34]:

Սյունին ընդունում է, որ, այնուամենայնիվ, համիդյան կոտորածները ներառել են դեպքեր, երբ կոտորվել են ամբողջական գյուղերի բնակիչներ, սակայն նրա կարծիքով դա չի արվել համակարգված կերպով, ինչպես դա տեղի է ունեցել Առաջին աշխարհամարտի ժամանակ: Աբդուլ Համիդը խրախուսում էր սպաներին և սովորական մարդկանց գործել հայերի դեմ, քանի որ ուրախ էր տեսնելու կայսրությունում հայերի թվաքանակի նվազումը: Սակայն, Սյունին պնդում է, որ «Համիդի արդիականացման ծրագիրն իր մեջ պարունակում էր պահպանողական ռեստորացիայի (վերականգնողական) օրակարգ, որն ուղղված էր տիրող կարգի պահպանմանը: Նրա անձնական պարանոյան արտացոլում էր սեփական և առավել լայն սոցիալական տագնապները՝ կապված չկառավարվող փոփոխությունների, ներսում՝ մուսուլմանների, իսկ դրսում կայսրության ստատուսի անկման, ինչպես նաև Օսմանյան կայսրության ներսում և դրսում հայերի հատուկ դրության հետ, որոնց տաղանդը նա և մյուսները գիտակցում և դրանից զայրանում էին»[35]: Սյունին պնդում է նաև, որ Աբդուլ Համիդի համոզմամբ՝ հայերը պետք է կառավարվեին, նրանց «դաս պետք է տրվեր, նվազեցվեր նրանց թիվը և ազդեցությունը, բայց չջնջել կայսրության բազմամշակույթ խճանկարից: Աբդուլ Համիդը կայսրություն պահպանող էր, ոչ թե Քեմալ Աթաթուրքի նման էթնոազգային պետության հիմնադիր»[36]: Անդրադառնալով երիտթուրքերին՝ Սյունին նշում է, որ չնայած նրանք սկզբում հանդես էին գալիս որպես Աբդուլ Համիդի հեղափոխական ընդդիմադիրներ՝ զարմանալիորեն շարունակեցին կայսրությունը պահպանելու նրա տեսլականը, բայց դա արեցին՝ մեկ քայլ առաջ գնալով ու հասցնելով խիստ ծայրահեղ վերջաբանի: Չնայած հավասարության վերաբերյալ սկզբնական հավաստիացումներին՝ նրանք ի վերջո թեքվեցին մուսուլմանների և թուրքերի գերակայությամբ կայսրություն ունենալու մտքին, ինչն էլ հանգեցրեց Հայոց ցեղասպանությանը[37]:

They Can Live in the Desert but Nowhere Else: A History of the Armenian Genocide [Նրանք կարող են ապրել միայն անապատում և ոչ մի այլ տեղ. Հայոց ցեղասպանության պատմություն] գրքում Սյունին տալիս է Հայոց ցեղասպանության

34 Ronald Grigor Suny, "The Hamidian Massacres, 1894-1897: Disinterring a Buried History," *Études arméniennes contemporaines* 11 (2018), at http://journals.openedition.org/eac/1847, դիտվել է 10.07.2020:

35 Նույն տեղում:

36 Նույն տեղում:

37 Նույն տեղում:

վերաբերյալ իր մեկնաբանությունը, որտեղ ավելի պարզորոշ է երևում, որ նա չի ընդունում շարունակականության թեզը: Ըստ նրա՝ 1915 թ. ցեղասպանությունը նախապես պլանավորված չէր, այլ տվյալ պահին եղած ճգնաժամին տրված արձագանքն էր, արձագանք, որը արմատականացել էր ժամանակի ընթացքում: Չնայած համիդյան կոտորածների և ցեղասպանության ահռելի նմանություններին՝ այդ երկու դեպքերը էականորեն տարբերվում են միմյանցից իրականացման մասշտաբով և հետևանքներով: Սյունին պնդում է, որ ի տարբերություն համիդյան կոտորածների՝ ցեղասպանության ժամանակ խնդիր էր դրվել հայաթափելու կայսրության նահանգներն, ինչն էլ այդ գործողությունը դարձնում է ավելի արմատական ու հեղափոխական[38]: Նա նշում է, որ ցեղասպանության դրդապատճառները ոչ կրոնական էին, ոչ էլ՝ պայքար երկու մրցակից ազգայնականության միջև, որոնցից մեկը ոչնչացրեց մյուսին, այլ հուսահատ առաջնորդների պաթոլոգիական արձագանք, որոնք անվտանգություն էին փնտրում մի ժողովրդից, որին նրանք էին դարձրել թշնամիներ և մղել դեպի արմատական ընդդիմություն մի ռեժիմի դեմ, որի ներքո ապրել են դարեր շարունակ[39]:

5. Սուլթանի դերը և Ռուսաստանի գործոնը. Ռոբերտ Մելսոնի մեկնաբանությունը

Քաղաքագետ Ռոբերտ Մելսոնն իր *Revolution and Genocide: On the Origins of the Armenian Genocide and the Holocaust* [Հեղափոխություն և ցեղասպանություն. Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի ծագման մասին] աշխատության մեջ զուգահեռում է հայերի և հրեաների ողբերգությունները և փորձում բացատրել դրանց ակունքները[40]: Այս աշխատության գլխավոր պնդումն այն է, որ հայերը Օսմանյան կայսրությունում, իսկ հրեաները Գերմանիայի կայսրությունում «համեմատաբար խաղաղ» գոյատևել են մինչև երկու տերություններում տեղի են ունեցել հեղափոխություններ և պատերազմներ: Նրա խոսքերով՝ հեղափոխական վարչակարգերը, որդեգրելով պանթուրքիզմը և նացիոնալ սոցիալիզմը, ցեղասպանությունը դարձրել են և՛ քաղաքականություն, և՛ գաղափարախոսություն: Այսինքն՝ Մելսոնը պնդում է, որ այլատյաց ազգայնամոլությունն էր, որ սաստկացրեց հակահայկական տրամադրությունները Թուրքիայում և հակասեմականությունը Գերմանիայում:

Գրքի երկրորդ գլխում Մելսոնն անդրադառնում է նաև համիդյան կոտորածներին: Մասնավորապես, նա առաջադրում է երկու կարևոր հարց՝ (1) ո՞րն էր հայերի կոտորածների պատճառը, (2) ո՞րն էր կապը այդ կոտորածների և ցեղասպանության միջև: Խոսելով կոտորածների պատճառների մասին՝ հեղինակը նախ անդրադառնում է որոշ պատմաբանների այն պնդմանը, որ կոտորածները ենթադրյալ հայկական

38 Suny, *They Can Live in the Desert*, 358-359.

39 Նույն տեղում, 2015, 359:

40 Robert Melson, *Revolution and Genocide: On the Origins of the Armenian Genocide and the Holocaust* (Chicago & London: University of Chicago Press, 1996).

սադրանքների, հատկապես հեղափոխական կուսակցությունների գործունեության հասկանալի արդյունքն էին: Ի պատասխան այս թեզի՝ Մելսոնը նշում է, որ անհնար է քննարկել ցանկացած ռեժիմի քաղաքականություն առանց հաշվի առնելու նրա գաղափարախոսությունը, դրդապատճառներն ու ընկալումները, հատկապես նվազեցնել դրանք՝ ուղղակի դիտարկելով որպես պատասխան «սադրանքներին»[41]: Ռոբերտ Մելսոնը գտնում է, որ սադրանքի (պրովոկացիայի) թեզը չի կարող կոտորածների հավաստի բացատրությունը լինել, քանի որ այն ցույց չի տալիս, որ հայկական հեղափոխական կուսակցությունները լուրջ սպառնալիք էին: Ըստ Մելսոնի՝ սադրանքի թեզը չի բացատրում նաև, թե ինչու հայերի որոշ կոտորածներ, որոնք նախորդել էին 1894-1896 թթ. կոտորածներին, տեղի են ունեցել նախքան այդպիսի կուսակցությունների ձևավորումը[42]: Այսպես՝ Մելսոնը նշում է, որ հայկական ավանդական կուսակցություններին վերագրվող սադրանքը բխում էր ոչ թե վերջիններիս գործողություններից, այլ ավելի լայն համատեքստից, որի մեջ հայկական միլլեթը դիտարկվում էր որպես օսմանյան ավանդական պետական կարգին մարտահրավեր նետող: Այլ կերպ ասած՝ հայկական ավանդական կուսակցությունների գործունեությունը ոչ թե կոտորածների պատճառն էր, այլ այն ծառայում էր որպես դրանց իրականացման համար պատրվակ, ապա նաև՝ արդարացում[43]:

Հարցը դիտարկելով ավելի լայն համատեքստում՝ Մելսոնը նշում է, որ հաշվի առնելով մեծ տերությունների շնորհիվ կայսրության շարունակական կազմալուծումը և փոքրամասնությունների աստիճանական առանձնացումը կայսրությունից, ինչպես նաև հայերի՝ Ռուսաստանի հետ սահմանին մոտ տեղակայված լինելը, նրանց շփումները եվրոպական տերությունների հետ, հայերի վերածնունդն այն ժամանակ, երբ Օսմանյան կայսրությունը դիմագրավում էր տարբեր խնդիրների, փոխեցին հայերի մասին ընկալումները կայսրությունում, և վերջիններս սկսեցին դիտվել որպես ընդվզող և սադրիչ ուժեր[44]: Իսկ *համիդյան կոտորածների կարևոր նախադրյալն ու այն ուժեղացնող գործոն Մելսոնը համարում է սուլթանի պահպանողական գաղափարախոսությունը*: Սուլթանը ցանկանում էր պահպանել կայսրության ամբողջականությունը և կարծում էր, որ դա կարող է անել՝ վերստին ամրապնդելով իսլամը և վերականգնելով ավելի հին կարգը, այսինքն՝ միլլեթ համակարգը, որի վերևում մահմեդականներն էին, իսկ ներքևում՝ քրիստոնյանները, և գտնում էր, որ կարող է ազդել այդ փոփոխությունների վրա՝ ուժի կիրառմամբ: Հեղինակը գտնում է, որ եթե *վերականգնումը միջոց էր միասնության համար, ապա կոտորածը միջոց էր վերականգնման համար*[45]:

Ռ. Մելսոնը դիտարկում է նաև այն հարցը, թե ինչու է սուլթանն ընտրել կոտորածը, երբ կարող էր այլ քաղաքականություն վարել. օրինակ՝ կարող էր օգտագործել

41 Նույն տեղում, 43:

42 Նույն տեղում, 51:

43 Նույն տեղում, 63:

44 Նույն տեղում, 63:

45 Նույն տեղում:

իրավական բռնաճնշումները և ոստիկանության իրավասությունները՝ կրճատելու հեղափոխական քաղաքական կուսակցությունների գործունեությունը կամ հակառակը՝ թույլատրել ազատական բարեփոխումները: Սակայն, ըստ Մելսոնի, սուլթանն ընտրեց հենց հարցը կոտորածներով լուծելու տարբերակը, քանի որ, հաշվի առնելով հայերի մշակութային վերածնունդը, գտավ, որ հատկապես կոտորածներն են ամենաօգտակար քաղաքականությունը[46]: Ըստ Մելսոնի՝ ոստիկանական բռնաճնշումները կարող էին արդյունավետ օգտագործվել անհատների և կուսակցությունների դեմ, բայց ոչ հիմնական համայնքային խմբերի վերածնունդը կանխելու համար, վերածնունդ, որը նշանակում էր մի ամբողջ բնակչության առաջընթաց տնտեսական, մշակութային, սոցիալական և քաղաքական ոլորտներում: Նման լայնածավալ մոբիլիզացիան դադարեցնելու համար անհրաժեշտ էր լայնածավալ քաղաքականություն, որը պետք է կանխեր առաջընթացը բոլոր ոլորտներում:

Այսպիսով՝ հեղինակը նշում է, որ համիդյան կոտորածների պատճառներն էին սուլթանի ընկալումներն ու գաղափարախոսությունը, հայերի և ռուսների միջև ենթադրյալ կապերը, օսմանյան ռեժիմի թշնամիները, հայերի սոցիալական մոբիլիզացիան[47]: Սակայն կարևոր է նշել, որ Մելսոնը համարում է, որ Աբդուլ Համիդ II-ը մտադրություն չուներ ոչնչացնել հայերին կամ այդպիսով նաև հայկական միլլեթը, որը, ըստ նրա, երևում էր կոտորածների ավարտից հետո[48]: Նաև գտնում է, որ չնայած ջարդերը թունավորեցին հայերի և մուսուլմանների հարաբերությունները և կարող են դիտարկվել որպես ցեղասպանության նախերգանք, այնուամենայնիվ, հայերը վերապրեցին այդ բռնությունները՝ որպես Օսմանյան կայսրության բաղկացուցիչ մաս[49]:

Ինչ վերաբերում է համիդյան կոտորածների և Հայոց ցեղասպանության «փոխհարաբերություններին», ապա Ռոբերտ Մելսոնը գտնում է, որ 1915 թ. ցեղասպանությունը որակապես տարբերվում էր համիդյան կոտորածներից: Աբդուլ Համիդի վարչակարգը կոտորածներն օգտագործեց ոչ թե հայերին ոչնչացնելու, այլ հին կարգը վերականգնելու/պահպանելու համար, իսկ երիտթուրքերի վարչակարգն օգտագործեց ցեղասպանությունը հայերին թուրքական սոցիալական կառուցվածքից ոչնչացնելու համար, ինչը նշանակում է, որ համիդյան վարչակարգի ժամանակ եղել են զանգվածային բռնության մասշտաբները սահմանափակող որոշ պատվարներ, որոնք քանդվել են երիտթուրքական հեղափոխության հետևանքով[50]: Հեղինակը ենթադրում է, որ համիդյան կոտորածների ժամանակ հնարավոր պատվարներից մեկը (սակայն սա կարևոր պատճառ չի համարում) արտաքին ուժերն էին, որոնք հետ էին պահում Բարձր դռանը, և, հատկապես, մեծ տերությունների նկատմամբ վախը:

---

46 Robert Melson, "A Theoretical Inquiry into the Armenian Massacres of 1894-1896," *Comparative Studies in Society and History* 24, no 3 (1982): 506.

47 Melson, *Revolution and Genocide*, 66.

48 Նույն տեղում, 69:

49 Նույն տեղում:

50 Նույն տեղում, 44:

Բայց 1894-1896 թթ. Օսմանյան կայսրության կողմից տոտալ ցեղասպանություն չիրականացնելու հիմնական պատճառը Մելսոնը համարում է *իսլամը, միլլեթ համակարգը և հին համակարգի վերականգնմանը նրա հանձնառությունը*: Նա նշում է, որ Աբդուլ Համիդը հեղափոխական չէր, այլ ռեակցիոն պահպանողական, որը դեմ էր պետության և հասարակության արմատական բարեփոխումներին: Իսկապես, հայկական միլլեթի ոչնչացումը սուլթանի համար կնշանակեր հեռացում իր իսկ պահպանողական գաղափարախոսությունից և կնսեմացներ իսլամը և միլլեթ համակարգը, այդպիսով նաև օսմանյան հասարակությունը օսմանյան պետությանը կապող լեգիտիմության առասպելը: Չնայած իրականացվող կոտորածներին՝ սուլթանը պատրաստ չէր գնալ այնքան հեռու, որ ոչնչացներ հայկական միլլեթը: Սրան հակառակ՝ երիտթուրքերը, լինելով հեղափոխականներ, նման արգելակներ չունեին. և պարզապես ցանկանում էին կործանել հին ռեժիմը և այն փոխարինել նորով՝ հիմնված թուրքական ազգայանականության վրա: Դա էր պատճառը, որ նրանք 1915 թ. առանց վարանելու կոտորեցին հայերին[51]:

6. Թաներ Աքչամ. պանիսլամիզմը և համիդյան կոտորածները

Թուրք սոցիոլոգ և պատմաբան Թաներ Աքչամն *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility* [Ամոթալի արարք. Հայոց ցեղասպանությունը և Թուրքիայի պատասխանատվության հարցը] գրքում խնդրի քննարկումը սկսում է՝ հերքելով այն պնդումը, թե հայերն ու թուրքերն ապրել են քիչ թե շատ խաղաղ գոյակցության պայմաններում: Ավելին՝ հենց 19-րդ դարում տեղի ունեցածն է, որն, ըստ Աքչամի, ճանապարհ է բացում 1915 թ. տեղի ունեցածը հասկանալու համար[52]: Թաներ Աքչամի դիտարկմամբ՝ մինչև 1915 թ. հայերի դեմ իրականացված կոտորածները «տեղային» բնույթ են կրել, նույնիսկ եթե դրանք հետևանք էին կենտրոնական օսմանյան քաղաքականության: Դրանց նպատակը ոչ միայն մահմեդական բնակչությանը սուլթանին կապելն էր, այլև հայերին հնազանդեցնելը[53]: Այս ժամանակաշրջանում Օսմանյան պետությունը ջանում էր պանիսլամիստական գաղափարախոսության հիման վրա հասնել ազգային միասնության՝ փորձելով կասեցնել կայսրության անկման և փլուզման գործընթացը: Որպես գիտակից պետական քաղաքականություն՝ այս ժամանակաշրջանում է սկսվել նաև ազգային-կրոնական խմբերի (մասնավորապես հայերի)՝ հատկապես կրոնական հողի վրա սոցիալական մեկուսացումը: Ինչպես նշում է հեղինակը, հայերը վերածվեցին քավության նոխազների[54]: Այսպիսի միջավայրում հեշտ էր

51 Նույն տեղում, 69:

52 Taner Akcam, *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility* (New York: Metropolitan Books/Henry Holt & Company 2006), 23, 24.

53 Նույն տեղում, 38:

54 Նույն տեղում, 30-32: Օրինակ՝ մի կողմից, պնդելով, որ հայերն ահավոր հարուստ են, կազմում են Օսմանյան բյուրոկրատիայի մեկ երրորդը, վճարում են շատ քիչ հարկեր և չեն ծառայում բանակում, Աբդուլ Համիդը ասում էր, որ հայերն այլասերված համայնք են: Նա նաև պնդում էր, որ հայերի

տարածել այն գաղափարը, որ հայերը ներքին տարածքում արտաքին թշնամիներ են: Հայկական հարցն աստիճանաբար սկսեց ավելի ու ավելի դիտարկվել որպես կայսրության գոյատևման հարց: Կայսրության մուսուլմանների միասնությունն անկման և կազմալուծման հոգեբանական արդյունք էր՝ զուգորդված հավատքով, որ կայսրությունը շրջապատված էր պետության ոչնչացմանը ձգտող թշնամական ուժերով: Այսպիսով՝ պանիսլամիզմը վերածվեց պետական գաղափարախոսության[55]:

Աքչամը պնդում է, որ չնչին սադրանքի վրա հիմնվելով՝ պետությունը սանձազերծեց իր հարձակումները՝ հույս ունենալով, որ այն ավելի սերտ կկապի մուսուլմաններին կայսրությանը[56]: Հեղինակն այս տեսակետը փաստում է Կ.Պոլսում Ավստրիայի դեսպանի մեջբերումով. «Զինված մուսուլմանները գործի անցան՝ կոչելով այս քաղաքականությունը «մուսուլմանների խաչակրաց արշավանք»[57]: Նրանք նաև նպատակ ունեին, որ մուսուլմանները քրիստոնյաների վրա հարձակումները դիտարկեն որպես իրենց կրոնական պարտքը[58]: Այստեղ Աքչամը մեջբերում է բրիտանական դեսպանատան դրագոմանին, ում զեկույցները հիմնված են տեղական մահմեդականներից լսածների վրա. «Հանցագործները առաջնորդվում էին շարիաթի օրենքներով: Օրենքը նախատեսում էր, որ եթե «ռայան» կամ անասունը, կամ քրիստոնյանները, փորձում էին օտար պետությունների միջոցով գերազանցել մուսուլման ղեկավարների կողմից իրենց տրված իրավունքները և ազատվել նրանց ճնշումներից, նրանց կյանքն ու ունեցվածքը ոչնչացվում էր, և նրանք գտնվում էին մուսուլմանների ողորմության ներքո: Թուրքերի կարծիքով, արտաքին ուժերի, հատկապես՝ Անգլիայի միջոցով, հայերը փորձում էին գերազանցել այդ սահմանափակումները: Այդ պատճառով նրանք իրենց կրոնական պարտքն էին համարում ոչնչացնել հայերին»[59]: Նա նաև նշում է, որ հավատը, որ հայերին սպանելով մուսուլմաններն իրականացնում էին իրենց կրոնական պարտքը, գուցե որոշումների կայացման մակարդակում դրդապատճառ չլիներ, բայց կարևոր գործոն էր 1915 թ. Հայոց ցեղասպանության ընթացքում և իր ազդեցությունն ունեցավ նաև հետագայում[60]:

Իսկ 1915-17 թթ. տեղի ունեցած երևույթները, հեղինակի դիտարկմամբ, այլ

շահեկան դիրքը բխում էր տնտեսական հզորությունից, և վերջինս սկսեց ճնշումներ գործադրել առևտրականների և մնացած հայկական բուրժուազիայի վրա: Սկսեց արմատավորվել հավատքն առ այն, որ կայսրությունը բախվում էր, ինչպես Աբդուլ Համիդ II-ն էր նշում. «Քրիստոնյա աշխարհի անվերջ հետապնդումներին և թշնամանքին»: Կայսրությունը յուրաքանչյուր կողմից շրջապատող թշնամիները ցանկանում են կործանել այն: Այս մարտահրավերը դիտվում է որպես էրոզիայի կայուն աղբյուր: Աբդուլ Համիդ II-ը նաև ասում էր. «Խլելով Հունաստանը և Ռումինիան՝ Եվրոպան կտրել է թուրքական պետության ոտքերը: Բուլղարիայի, Սերբիայի, Եգիպտոսի կորուստը մեզ զրկեցին մեր ձեռքերից, և հիմա հայկական ագիտացիայի միջոցով, նրանք ուզում են հասնել մեր ամենակարևոր վայրերը և պոկել մեր փորոտիքները: Սա կլինի մեզ ամբողջովին ոչնչացնելու սկիզբը, և մենք պետք է դրա դեմ պայքարենք մեր ամբողջ ուժով»:

55 Akcam, *A Shameful Act,* 32-33.

56 Նույն տեղում, 33:

57 Նույն տեղում:

58 Նույն տեղում, 34:

59 Նույն տեղում:

60 Նույն տեղում, 34:

նպատակ էին հետապնդում, և Աքչամը մեջբերում է Թալեաթ փաշայի հուշագրում գրվածը. «հասնել այդ խնդրի ամբողջական և հիմնարար վերացմանը»[61]: Նա նշում է, որ թուրք ազգայնականների գաղափարները հետզհետե սկսեցին գերակշռել «Միություն և առաջադիմություն» կուսակցության շրջանակներում և կարևոր դեր խաղացին Հայոց ցեղասպանության իրականացման գործում[62]:

7. Դոնալդ Բլոքսհամ. Հայկական հարցի միջազգայնացումը և համիդյան կոտորածները

Բրիտանացի պատմաբան Դոնալդ Բլոքսհամը կարծում է, որ մինչև 19-րդ դարի կեսերի թանզիմաթի բարեփոխումները Օսմանյան կայսրությունում առկա է եղել քիչ թե շատ կայուն հանդուրժողականություն կրոնական փոքրամասնությունների նկատմամբ: Դրա գրավականը եղել է այն, որ փոքրամասնությունները շարունակում էին ընդունել աստիճանակարգային ստատուս-քվոն, իսկ պետությունը շարունակում էր ապահովել այն: Ամեն ինչ փոխվում է բարեփոխումների խնդրի բարձրացումից և ազգայնականության վերելքից հետո, քանի որ երկուսն էլ ազդեցին ինչպես ազգային փոքրամասնությունների ձգտումների, այնպես էլ մուսուլման վերնախավի վերաբերմունքի վրա[63]: Այդուհանդերձ, նույնիսկ այդ պայմաններում մինչև 1890-ական թթ. կառավարությունը, որպես կանոն, զերծ էր մնում լայնամասշտաբ կոտորածներից: Հույների կոտորածները 1820-ական թթ., Սիրիայի ու Լիբանանի դեպքերը 1860 թ., Կրետեինը՝ 1866–1868 թթ., կամ բուլղարական դեպքերը 1876 թ., անգամ Զեյթունի 1862 թ. տեղի ունեցածը մեծ հաշվով տեղային և ոչ զանգվածային կոտորածներ էին[64]:

Կայսրության գոյության վերջին երեք տասնամյակը, ընդհակառակը, նշանավորվեց զանգվածային և պետության կողմից թույլատրված ջարդով: Դա տեղի ունեցավ այն ամենից հետո, երբ Հայկական հարցը դրվեց միջազգային դիվանագիտության սեղանին՝ դրանով իսկ դառնալով օսմանյան հաջորդ ռեժիմների համար այնպիսի թունավոր հարց, որի դեմ կիրառեցին ոչ թե խտրականություն, հետապնդում, աստիճանական տնտեսական մարգինալացում, այլ՝ անմիջական զանգվածային կոտորած: Բլոքսհամը նշում է, որ կոտորածների համար «անհրաժեշտ» պայմաններ դարձան մուսուլման-քրիստոնյա բևեռացումը և այդ նույն ժամանակահատվածում մուսուլման փախստականների ներհոսքը: Իսկ ահա Հայկական հարցի միջազ-գայնացումը դարձավ կոտորածների իրականացման «բավարար պայմանը»: Այլ կերպ ասած՝ ըստ Բլոքսհամի՝ Հայկական հարցի «միջազգայնացումն» է, որ հրահրեց Հայկական հարցը հայերի ոչնչացմամբ լուծելու տարբերակ, որն էլ ստեղծեց հայերի նկատմամբ բոլորովին այլ վերաբերմունք[65]:

---

61 Նույն տեղում, 38:

62 Նույն տեղում, 38:

63 Donald Bloxham, *The Great Game of Genocide: Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians* (New York: Oxford University press, 2005), 15.

64 Նույն տեղում, 15:

65 Նույն տեղում:

Հայկական հարցի միջազգայնացումը և նախատեսված բարեփոխումները օսմանցիները դիտարկում էին որպես ապագա պարտադրանքներն ահազանգող ազդակ, որը կհանգեցներ հայերի ինքնավարության կամ նույնիսկ անկախության: Ավելին՝ հետագա տարիների ընթացքում հայերի չբավարարված դժգոհություններն ու ձգտումները կսկսեին արտահայտվել ոչ թե հայկական եկեղեցական աստիճանակարգի կամ էկումենիկ քաղաքական հաստատությունների կողմից, այլ ազգայնական կուսակցությունների: Վերջիններիս գոյության փաստն իսկ արագացնում էր կայսրության հնարավոր կործանման հետ կապված Աբդուլ Համիդի վախերը[66]:

Տարբեր ժամանակահատվածներում նրանց գործողությունների նպատակն էր գրավել արտաքին ուժերի, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայի կամ Ռուսաստանի ուշադրությունը, ինչպես նաև Ֆրանսիայի՝ ի նկատի ունենալով բուլղարների օրինակը: Սակայն, ըստ հեղինակի, չափից դուրս սպասումները թույլ չտվեցին բավարար կերպով հաշվարկել տարբեր ռազմավարական իրավիճակները և ժողովրդական բաշխումները Բալկաններում և արևելյան Անատոլիայում, քանի որ վերջինիս պարագայում քրիստոնյաները շրջապատված էին մուսուլման մեծամասնությամբ: Նրանց նաև չհաջողվեց հասկանալ իրականում ինչ էր նշանակում բարեփոխում տերությունների համար[67]:

Հայ ազգայնականների ակտիվացումը կարևոր դեր խաղաց հայերի նկատմամբ օսմանյան քաղաքականության ձևավորման գործում 1894-96 թթ. կոտորածների ժամանակ և 1914-15 թվականներին: Այդուհանդերձ, Բլոքսհամը պնդում է, որ, ժխտելով Հայոց ցեղասպանության նախասահմանվածությունը, պետք է ընդունել նաև այն դերակատարությունը, որ խաղացին գաղափարախոսությունն ու նախապաշարմունքները՝ ներառյալ հայերի նկատմամբ ատելությունը: Այսպիսով՝ Բլոքսհամը մի կողմից ընդունում է հանգամանքներով պայմանավորված «պատահականությունները», բայց համոզված է, որ անհատներն են կերտում պատմությունը: Սակայն անհատները դա չեն անում այնպես, ինչպես իրենք կուզեին, այլ առկա հանգամանքներով պայմանավորված ընտրության արդյունքում: Այլ կերպ ասած, հեղինակի կարծիքով, 1915 թ. ցեղասպանությունը թուրքերի կողմից հակադրություն էր այն ներքին և արտաքին ճնշումներին, որոնք կուտակվել էին Օսմանյան կայսրության վրա 1915 թ. դրությամբ[68]:

Բլոքսհամն ավելի շատ հակված է ընդունել, որ հենց թուրքական ազգայնականության գործոնն է, որ 1915 թ. տարբերակում է համիդյան դեպքերից, սակայն ընդունում է, որ համիդյան կոտորածները ցույց տվեցին հայերի խոցելի վիճակը: Նա նաև մատնացույց է անում սուլթանի պանիսլամիստական գաղափարախոսությանը, որը կայսրության մուսուլմաններին դարձրեց ավելի միասնական՝ ի հաշիվ քրիստոնյաների հետ նրանց հարաբերությունների: Հենց պանիսլամիզմը թույլ տվեց և խթանեց 1894-1896 թթ. կոտորածները՝ որպես պատիժ հայերի համար, քանի որ վախենում էին

66 Նույն տեղում, 16:

67 Նույն տեղում:

68 Նույն տեղում, 20, 21:

հայերի՝ բալկանյան ժողովուրդների նման անկախանալու հեռանկարից, չնայած հայկական կուսակցությունների նպատակը նախ և առաջ բարեփոխումներն էին[69]:

8. Մարկ Լևին. համիդյան կոտորածները համաշխարհային պատմության համատեքստում

Հայոց ցեղասպանության խնդրի նեղ մասնագետներից զատ համիդյան կոտորածները չեն վրիպել նաև առհասարակ ցեղասպանության տեսության արդի մեկնաբանների կողմից: Բրիտանացի մասնագետ Մարկ Լևինն իր բազմահատորանոց Genocide in the Age of the Nation-State [Ցեղասպանությունն ազգային պետությունների ժամանակաշրջանում] աշխատության մեջ բոլորովին այլ տեսանկյունից է մոտենում ինչպես ցեղասպանություն հասկացությանը, այնպես էլ համիդյան կոտորածների մեկնաբանությանը: Լևինը մարդկության պատմության ընթացքում տեղի ունեցած ցեղասպանությունները և զանգվածային այլ կոտորածները դիտարկում է ոչ թե որպես առանձին դեպքեր, այլ մեկ ամբողջի մաս[70]: Նա իր գրքում քննարկում է այն խորքային գործընթացներն ու հատկանիշները, որոնք կապում են ժամանակակից ցեղասպանությունները վաղ շրջանի նմանատիպ դեպքերի հետ: Մասնավորապես նա նշում է, որ աշխարհը հիմա մի փուլում է, որը ձևավորվել և զարգացել է որոշակի գերիշխող քաղաքական և տնտեսական ուժերի շնորհիվ, որոնք առաջացել էին Արևմուտքում վերջին հարյուրամյակների ընթացքում, և «ցեղասպանությունն այդ գործընթացի իրական կողմնակի ազդեցություններից մեկն է»[71]: Նա ցեղասպանությունը բացատրում է Արևմուտքի վերելքով, արդիականության (modernity) ժամանակահատվածով և, հատկապես, ազգային պետության (nation-state) առաջացումով: Ահա ցեղասպանության այսպիսի ընկալումն է, որն ընկած է ինչպես համիդյան կոտորածների, այնպես էլ Հայոց ցեղասպանության մեկնաբանության հիմքում:

Լևինի կարծիքով՝ 1890-ական թթ. կոտորածները նախընթաց փուլ են եղել 1915 թ. ցեղասպանության համար: Լևինը հակադրվում է այն պատմաբանների կարծիքին, ովքեր հստակ բաժանարար գիծ են մտցնում երկու դեպքերի միջև: Նրա կարծիքով նման մոտեցումը կարելի է բացատրել մասնագետների այն մտավախությամբ, որ համիդյան կոտորածները ցեղասպանություն բնութագրելու դեպքում նվազեցվում է 1915 թ. դեպքերի նշանակությունը՝ մոռանալով, որ 1915 թ. ցեղասպանությունն ինքնին վիճարկվում է ժխտողականների կողմից: Նշյալ մասնագետների մյուս, ավելի քիչ հայտնի մտահոգությունն այն է, որ քննարկելով հայ ազգային կուսակցությունների գործունեությունն այս փուլում՝ նրանք կնվազեցնեն հայերի՝ որպես զոհի կար-

69 Donald Bloxham, "Determinants of the Armenian Genocide," in *Looking Backward, Moving Forward: Confronting the Armenian Genocide*, 25, 26.

70 Mark Levene, *Genocide in the Age of the Nation-State, Vol. I: The Meaning of Genocide* (London: I.B. Tauris, 2005), 4.

71 Նույն տեղում, 7:

գավիճակը[72]: Սակայն, ըստ Լևինի, կայսրության արևելքում զարգացումները ցույց են տալիս, թե ինչպես են տեղական ազգայնական ձգտումները փոխազդեցության մեջ մտել ազգային պետությունների ձևավորվող միջազգային ցանցի հետ՝ ստեղծելով ցեղասպանության հավանականություն, անգամ՝ իրողություն:

Լևինը նշում է, որ թեև կայսրության ամբողջ հայ բնակչությունը չոչնչացվեց, և դրա համար մասնագետները խուսափում են այն ցեղասպանություն որակելուց, այդուհանդերձ, համիդյան կոտորածները մասնակի ցեղասպանություն էին[73]: 19-րդ դարի վերջին տասնամյակներին կայսրության արևելյան նահանգներում ապակայունացման ամենաուշագրավ հանգամանքն այն է, որ դրա հիմնական ակունքները ոչ թե տեղում էին, այլ առաջացել էին ավելի լայն պատմական ուժերի գործունեության արդյունքում: Լևինը պնդում է, որ ապակայունացումն Արևմուտքի վերելքի հետևանքն էր: Մի կողմից այդ ուժերը բավական տեսանելի և շոշափելի էին՝ Արևմուտքի մեծ տերությունների՝ Օսմանյան կայսրություն տնտեսական և քաղաքական ներթափանցման տեսքով՝ հայաբնակ նահանգները դարձնելով ազդեցության համար «մրցավազքի վայր»: Նմանապես, Արևմուտքից եկած գաղափարական հոսանքներն ունեցան կարևոր ազդեցություն, քանի որ ներդրվելով մուսուլմանական բռնապետության միջավայրում, դրանք բավականաչափ հեղափոխական էին, որն էլ ի վերջո ազգայնականության շնորհիվ իրավիճակը դարձրեց պայթունավտանգ[74]: Ըստ Լևինի՝ բոլոր ազգություններից հայերն ամենաշատը մոտեցան այս ազգայնական հետագծին, որովհետև նրանք բացառիկ էին արդիականացման մակարդակի և՛ խորությամբ, և՛ լայնությամբ: Ահա հենց սա էլ մուսուլմանների մեջ առաջացրեց զայրույթ նրանց նկատմամբ: Դա պայմանավորված էր հայերի ինչպես մշակութային, այնպես էլ տնտեսական հաջողություններով[75]: Այլ կերպ ասած՝ այս հանգամանքներն են, որ թույլ են տալիս համիդյան կոտորածներն ավելի լայն հետագծով նայել և տեսնել դրա կապը 1915 թ. ցեղասպանության հետ:

Ամփոփիչ դրույթներ և առաջարկներ

Համիդյան կոտորածների վերաբերյալ պատմագիտական մեկնաբանությունների քննությունը ցույց է տալիս, որ նույն իրողությունների, գործոնների, դերակատարների վերաբերյալ առկա են ինչպես միմյանց նման, այնպես էլ խիստ տարբեր գնահատականներ: Ընդհանուր առմամբ, համիդյան կոտորածների պատմագիտական գնահատականը հիմնվում է այն բանի վրա, թե ինչպես ենք տեղադրում այն պատմական համատեքստի մեջ, այսինքն՝ ինչպես է գնահատվում դրա

72 Նույն տեղում, 308:

73 Mark Levene, “Creating a Modern ‘Zone of Genocide’: The Impact of Nation- and State-Formation on Eastern Anatolia, 1878-1923,” *Holocaust and Genocide Studies* 12, no. 3 (1998): 396, 397.

74 Նույն տեղում, 398:

75 Նույն տեղում, 401, 402:

«հարաբերությունն» Առաջին աշխարհամարտի ժամանակ տեղի ունեցածի հետ: Այս առումով և՛ շարունակականության թեզի կողմնակիցները, և՛ դրան դեմ հանդես եկողներն առաջ են քաշել բավական լուրջ կովաններ իրենց փաստարկները պաշտպանելու համար: Որոշ այլ հետազոտողներ հարցը քննարկել են՝ դիտարկելով գործոնների ավելի լայն շրջանակ՝ փորձելով ավելի հավասարակշիռ և ամբողջական պատմագիտական գնահատական տալ խնդրին:

Այդուհանդերձ, ինչպես հաստատում են վերջին ուսումնասիրություններն, առկա են երեք կարևոր հանգամանքներ, որոնք պետք է հաշվի առնել համիդյան կոտորածների պատմագիտական գնահատականը տալիս: Առաջինը՝ համիդյան կոտորածները պետք է դիտարկել ոչ միայն 1915 թ. ցեղասպանության հետ հարաբերակցության համատեքստում, այլ ընդհանրապես Հայկական հարցի համատեքստում: Այս առումով, շարունակականության թեզը ոչ միայն ապրելու իրավունք ունի, այլև ավելի է ամրապնդվում, երբ Հայկական հարցը դառնում է քննարկման առանցք՝ կապելով 1890-ականներին տեղի ունեցածը 1915 թվականին: Անշուշտ առկա են զգալի տարբերություններ, որոնք արդեն քննարկվել են այս հոդվածում: Սակայն այդ տարբերությունները վերաբերում են թուրքական պետության՝ պատմական տվյալ պահին Հայկական հարցի նկատմամբ ունեցած դիրքորոշմանը և ձեռնարկված քայլերի հետապնդած նպատակներին: Այո՛, համիդյան կոտորածների ժամանակ նպատակն ավելի շատ պատժելն էր, իսկ 1915 թ. հայերին ամբողջությամբ բնաջնջելու խնդիր կար: Բայց երկու դեպքում էլ հակահայկական քաղաքականությունը Հայկական հարցին՝ իրենց համար ցանկալի և տվյալ պահին հարմար լուծում տալն էր:

Մյուս կարևոր հանգամանքը համիդյան կոտորածները ոչ միայն Հայկական հարցի, այլև ընդհանուր Օսմանյան կայսրության ժամանակագրական ավելի լայն համատեքստում դիտարկելն է: Համիդյան կոտորածներն ընդամենը մի օղակն են փոքրիկ ընդմիջումներով գրեթե մեկ դար (1820-ականներից մինչև 1920-ականներ) տևած օսմանյան կոտորածների շղթայի, որը ներառել էր բազմաթիվ հպատակ ժողովուրդներ՝ հայեր, հույներ, բուլղարներ, ասորիներ, եզդիներ և այլն: Այս փաստն արդեն հետազոտողներին պետք է թույլ տա դուրս գալ «համիդյան կոտորածներ-1915 թ. ցեղասպանություն» համեմատություն-հակադրությունից և հակահայկական բռնությունները դիտարկել ավելի լայն՝ օսմանյան ձևաչափով: Պետք չէ մոռանալ, որ որևէ այլ փոքրամասնության ներկայությունը թուրքական ղեկավարության համար չէր դիտվում որպես այնպիսի գոյաբանական վտանգ, ինչպես հայերինն էր: Սակայն բոլոր այդ կոտորածները, դրանց աստիճանական զարգացումն ունեցել են դերակատարություն 1890-ականներին հայերին կոտորածով պատժելու որոշման հարցում: Իր հերթին համիդյան կոտորածները և, մեծ հաշվով, դրանց անպատժելիությունը հիմք հանդիսացավ 1915 թ. ցեղասպանության համար: Այլ կերպ ասած՝ համիդյան կոտորածներն օսմանյան բռնությունների լայն համատեքստում դիտարկելը ոչ թե նվազեցնում է դրանց նշանակությունն ու մասշտաբներն, այլ թույլ է տալիս հասնել առավել ամբողջական պատմական գնահատականի:

Վերջապես, համիդյան կոտորածների ուսումնասիրությունը պետք է դիտարկվի համաշխարհային պատմության համատեքստում: Այսինքն՝ հետազոտողները չեն

կարող դիտարկել Օսմանյան կայսրությունում տեղի ունեցածն աշխարհում տեղ գտնող զարգացումներից կտրված: Մարկ Լևինի մեկնաբանությունը դրա լավագույն ապացույցն է և հաջող փորձերից մեկը: Եթե կոտորածներով հարց լուծելը նոր ձևավորված ավանդույթ չէր օսմանյան պետության պատմության մեջ, ապա առնվազն նոր էր դրա ինտենսիվությունը 19-րդ դարում: Հասկանալու համար, թե ինչու դա տեղի ունեցավ հենց 19-րդ դարում, Օսմանյան կայսրության ձևաչափը անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ: Այն, ինչ գալիս էր Արևմուտքից գաղափարների, միջոցների և այլնի տեսքով, յուրահատուկ փոխազդեցություն և արդյունք էր ստեղծում օսմանյան պետության մեջ: Ըստ այդմ, ևս մեկ քայլ առաջ գնալով՝ համիդյան կոտորածների քննարկումը պետք է ընդգրկի ոչ միայն արտաքին գործոնների առավել համալիր դիտարկումն, այլև, թե ինչպես է այս կամ այն գործոնն ազդել, փոխազդեցության մեջ մտել տեղական իրողությունների հետ, և ինչպիսի արդյունքներ ու հետևանքներ է առաջացրել:

Հաշվի առնելով և ամփոփելով վերոնշյալը՝ ամրագրենք, որ արդեն ժամանակն է մեկ քայլ առաջ անցնել շարունակականության հարցի շուրջ բանավեճից և համիդյան կոտորածների քննարկումը, մեր կարծիքով, տեղափոխել նոր մակարդակ՝ դրա քննարկման առանցքը դարձնելով Հայկական հարցը, իսկ քննարկումը պետք է ծավալել ավելի լայն՝ ինչպես Օսմանյան կայսրության ձևաչափով դիտարկելով հպատակ այլ ժողովուրդների վերապրած զանգվածային բռնությունների փորձառություններն, այնպես էլ գերազանցելով Օսմանյան կայսրության ձևաչափը՝ համակողմանիորեն ուսումնասիրելով արտաքին գործոնները և նրանց հետևանքները:

Narine S. Hakobyan
PhD student

WESTERN ENGLISH-LANGUAGE HISTORIOGRAPHY OF THE HAMIDIAN MASSACRES (1970s - 2010s)

SUMMARY

Key words: Armenian Genocide, Hamidian massacres, historiography, Armenian Question, Ottoman Empire.

This historiographical essay explores how the scholarship on the Hamidian massacres has evolved in Western English-language scholarship over the past fifty years introducing the main debates on this topic. The discussion reveals that almost all scholars have reflected on the question of “continuity” between the Hamidian massacres and the Armenian Genocide. Arguing for or against the “continuity” they have made it perhaps the most discussed issue in the scholarship. This paper rejects this dichotomy and argues for a more complex view on Hamidian massacres that should consider both perspectives and not necessarily contrast them.

Morover, it contends that positioning the Hamidian massacres in relation to the Armenian Genocide is not enough for its contextulization. The paper argues that the contextualization of the Hamidian massacres should (a) place it and the Armenian Genocide in the context of the Armenian Question, (b) consider the Ottoman massacres of other subject groups in a longer (1820s-1920s) perspective, and (c) observe the Hamidian massacres transcending the "container" of the Ottoman state and discussing the foreign factors in the Ottoman violence.

Нарине С. Акопян
Аспирант

ГАМИДОВСКАЯ РЕЗНЯ В ЗАПАДНОЙ АНГЛОЯЗЫЧНОЙ ИСТОРИОГРАФИИ (1970-2010_е ГОДЫ)

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид армян, гамидовская резня, историография, Армянский вопрос, Османская империя.

В статье исследуются основные дискуссии о гамидовской резне в западной англоязычной историографии за последние пятьдесят лет. Показано, что почти все авторы ссылались на проблему "преемственности" между гамидовской резней и Геноцидом армян. Выступая за или против аргумента "преемственности," они сделали его, пожалуй, наиболее обсуждаемым вопросом в историографии.

В статье, однако, отвергается это противоречие и утверждается, что историческая оценка гамидовской резни должна учитывать обе точки зрения и не обязательно противопоставлять их. Предлагается новый, "единый" подход к исторической оценке гамидовской резни, который должен а) рассмотреть ее вместе с Геноцидом армян в контексте Армянского вопроса, б) провести параллели в контексте преследований и массовых убийств других народов Османской империи в более долгосрочной перспективе (1820-1920-е годы), в) рассмотреть гамидовскую резню, выйдя за рамки Османской империи и всесторонне изучив внешние факторы, влияющие на формирование и осуществление османских насилий и их последствия.

REFERENCES

Kirakossian, John. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90–ական թթ. – 1914 թ.) [The Young Turks before the Court of History (90s of the 19th Century – 1914)]. Yerevan: Hayastan, 1982;

Nersisyan, Mkrtich G. (ed., compiler and author of the Introduction) Հայերի

ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու [Armenian Genocide in the Ottoman Empire: Collection of Documents and Materials]. Yerevan: Hayastan, 1991;

Sargsyan, Ervand. Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում [Turkey and its Policy of Conquest in Transcaucasia]. Yerevan: Hayastan, 1964.